զդրունս քաղաքիս և եդին պահապանս մեծաւ զգուշութեամբ պահել, որպէս ոչ էր հնար ումեք անցանել ի դրանցն կամ հանել զմեռեալ և տանել ի թաղումն։ Յայնժամ ըստ կամաց իւրեանց մեծամեծք եէնկիչերոցն կարգեցին զօրագլուխ, նախարար և դատաւոր ի միջի իւրեանց և եդին վէզիր զՍօֆի Մէհէմէտ փաշան, որ էր տէֆթէրտար, և տէֆթէրտար աբարին (պաբաբ), և եէնկիչէր աղասի՝ զՄուրատ աղան, և զայլ մեծամեծսն մինչև ցփոքունս։ Եւ առաքեցին առ թագաւորն որսալ բան ինչ ի բերանոյ նորա, որպէս թէ հաւա՞ն իցէ արարմանց նոցա։ Եւ վասն երկիւղի նոցա ընկալաւ զնոսա թագաւորն և զլաթեալ առ տեղիս իւրեանց առաքեաց և դադարեցան յայնժամ ի խռովութենէ։ Իսկ ի միւսում առաւօտու Շաբաթի աւուր (28 Յունուար) վերստին գումարեցան ի նոյն տեղւոջ, որ ասի Օրթայ ճամի, և գրոհ տվեալ յայնժամ առ հասարակ, որպէս ի միոջէ բերանոյ մեծաւ հանդիսիւ սկսան զեռալ և ընթանալ զօրքն ամենայն նիզակաբարձք և վաղակապատք սասդերովդ (?) քաղաքիս զեղուն ընթանային, մինչ զի տեսողացն սալարեալ սարսէին սակս իրացն զինչ լինելոյն։ Եւ եկեալ խուռն ամբոխիւ հասին ի ժամադրեալ տեղիսն՝ լայնատարած և մեծասարաս աղօթարանն իւրեանց, որ կոչի Եէնկի ճամի՝ ի կողմս արեւելից շինեալ Սուլթան Ահմէտէ հօրէն Իպրահիմի, որ է հանդէպ պալատի թագաւորին. յորում սրահի կայացեալ կայ ի Յունաց՝ ի տեղի ձիրնթաց ասպարիսին այն արձանս եռակ. մինն բարձր քարահիւս շինեալ, որ երկայնութիւն ունի իբր մարդաչափս եօթանց. և երկրորդն խոնարհ քան զնա քար(*) և փերթ կանգնեալ ի վերայ չորից ոտից քարանց շինեալ ի Թէոդոսէ. և երրորդն ինոցանէ է պղնձի

(*) Լուս. վէմ մի։